ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2007թ. սեպտեմբերի 7-ին ժամը 15:30-ին
կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Վաչե Տերտերյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ /նախարար, ՀՀ Փոխվարչապետ Հովիկ Աբրահամյանի փոխարեն/
Նազելի Վարդանյանը	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ-ի նախագահ
Տոնական Ղազարյանը	«Շենիկ» Ջրօգտագործողների ընկերությունների միության նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ-ի նախագահ
Վարդան Համբարձումյանը	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ
Կարինե Բաղդասարյանը	«Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամ /Կարեն Նազարյանի փոխարեն, լիազորագրով, լիազորագիրը կցվում է/

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Անդրանիկ Մանուկյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Ռուզաննա Ղազարյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Ալեքս Ռասինը	Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Գայանե Հարությունյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի գործերի կառավարիչ
Լևոն Մարտիրոսյանը	ՀՀ վարչապետի օգնական
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. ՀՄԿ-ին ներկայացվող 5-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.

   ա/ Հատկացման հայտ և Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
   բ/ Հատկացման Նախապայմանների հաշվետվություն,
   գ/ ֆինանսական և աշխատանքային պլաններ,
   դ/ Եռամսյակային առաջընթացի հաշվետվություն,
   ե/ Գնումների կատարման հաշվետվություն,
   զ/ Գնումների գործառնական ձեռնարկ:
2. Բնապահպանական և սոցիալական գնահատում և վերահսկողություն խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթի պայմանագրի վերջնական նախագծի քննարկում և հաստատում:
3. «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և «Գյուղական Ֆինանսավորման Կառույց - ՕԻԳ» պետական հիմնարկի միջև կնքվելիք «Իրականացնող կազմակերպության Պայմանագրի» վերջնական նախագծի քննարկում և հաստատում:
4. «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի միջև կնքվելիք «6 մայր ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկողություն» պայմանագրի վերջնական նախագծի քննարկում և հաստատում:
5. «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի 1-ին փաթեթում ընդգրկված ճանապարհների համար իրականացված աշխատանքների տեխնիկական աուդիտի խորհրդատվական ծառայություններ մատուցող անհատ խորհրդատուի տեխնիկական առաջադրանքների (ToR) և մրցույթի հրավեր-հայտարարության տեքստի քննարկում և հաստատում:
6. «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի 1-ին փաթեթում ընդգրկված ճանապարհների «Շինարարական աշխատանքների վերահսկողություն»

խորհրդատվական ծառայությունների մատուցման համար ներկայացված տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

7. ՀՄԿ-ի առաջարկությունների հիման վրա՝ «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի «Ֆինանսական գործակալի» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների վերահաստատում:
8. «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/Գլխավոր խորհրդատուի թեկնածուների նախնական ընտրության քննարկում և հաստատում:
9. Այլ հարցեր.

ա/ տեղեկատվություն՝ «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի ազդեցության գնահատման նպատակով գյուղացիական տնտեսությունների հետազոտության անցկացման խորհրդատվական ծառայության համար առավելագույն միավորներ ստացած խորհրդատուի պայմանագրի նախագծում փոփոխությունների վերաբերյալ,

բ/ Մրցույթների վիճարկման հանձնաժողովի կազմի հաստատում:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝

1) հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 5-րդ Հատկացման հայտը և դրան կցվող հետևյալ փաստաթղթերի փաթեթը.
ա/ Հատկացման հայտ և Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
բ/ Հատկացման Նախապայմանների հաշվետվություն,
գ/ ֆինանսական և աշխատանքային պլաններ,
դ/ Եռամսյակային առաջընթացի հաշվետվություն,
ե/ Գնումների կատարման հաշվետվություն:

2) ՀՀ Վարչապետի անունից հանձնարարել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար պարոն Ն. Երիցյանին՝ 5-րդ Հատկացման Նախապայմանների հաշվետվության 4.6 կետում նշված նախապայմանի /այն է՝ *«ՀՀ Կառավարությունը մշակել և ընդունել է օրենսդրություն և/կամ այլ իրավական ակտեր, կամ փոփոխել է գործող օրենսդրական կամ այլ իրավական ակտերը, որպեսզի հեշտացնի գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը»/* լիովին կատարումն ապահովելու նպատակով սեղմ ժամկետում ՀՀ կառավարություն ներկայացնել «Կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակված վերջնական տարբերակը:

3) **Գնումների գործառնական ձեռնարկը** քննարկել և ***հաստատել հարցման կարգով*** հաջորդ շաբաթվա ընթացքում «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից Ձեռնարկի հայերեն լեզվով տարբերակի ներկայացումից հետո:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Բնապահպանական և սոցիալական գնահատում և վերահսկողություն» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթի պայմանագրի վերջնական նախագիծը:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և «Գյուղական Ֆինանսավորման Կառույց - ՕԻԳ» պետական հիմնարկի միջև կնքվելիք «Իրականացնող կազմակերպության Պայմանագրի» վերջնական նախագիծը՝ դրանում կատարելով որոշակի փոփոխություն՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից արված առաջարկության հիման վրա, կապված Պայմանագրում կատարված այն հղումի հետ, որի համաձայն Պայմանագրին կցված է ուղեցույց, որն իրականում դեռևս մշակված չէ և պետք է մշակվի պայմանագրի ստորագրումից հետո:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի միջև կնքվելիք «6 մայր ջրանցքների

վերականգնման նախագծում և շինարարության վերահսկողություն» պայմանագրի վերջնական նախագիծը:

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի 1-ին փաթեթում ընդգրկված ճանապարհների համար իրականացված աշխատանքների տեխնիկական աուդիտի խորհրդատվական ծառայություններ մատուցող անհատ խորհրդատուի տեխնիկական առաջադրանքները և մրցույթի հրավեր-հայտարարության տեքստը:

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի 1-ին փաթեթում ընդգրկված ճանապարհների «Շինարարական աշխատանքների վերահսկողություն» խորհրդատվական ծառայությունների մատուցման համար ներկայացված տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 7-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ ՀՄԿ-ի առաջարկությունների հիման վրա վերահաստատել «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի «Ֆինանսական գործակալի» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 8-րդ հարցի քննարկումից առաջ, շահերի բախումից խուսափելու նպատակով Ն. Վարդանյանը դուրս եկավ նիստի դահլիճից: Վերջինիս բացակայությամբ **<u>միաձայն</u>** /8կողմ, դեմ/ձեռնպահ չկար/ **որոշվեց՝** հաստատել «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/Գլխավոր խորհրդատուի թեկնածուների նախնական ընտրության արդյունքները և թեկնածուների կարճ ցուցակը՝ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հերթականությամբ, այն է՝ 1. Նազելի Վարդանյան, 2. Նորա Մարտիրոսյան, 3. Մարիա-Մոնիկա Հարությունյան, ներկայացնել ՀՄԿ-ի վերջնական ընտրությանը:

Օրակարգի 9-րդ հարցի՝

1) «ա» ենթակետի վերաբերյալ որոշվեց.

- ընդունել ի գիտություն «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանի տեղեկատվությունը՝«Ջրից դեպի շուկա» բաղադրիչի ազդեցության գնահատման նպատակով գյուղացիական տնտեսությունների հետազոտության անցկացման խորհրդատվական ծառայության համար առավելագույն միավորներ ստացած խորհրդատուի պայմանագրի նախագծում փոփոխությունների կատարման վերաբերյալ, և տալ հավանություն կատարված փոփոխություններին,

2) «բ» ենթակետի վերաբերյալ որոշվեց.

- հաստատել «ՀՄՀ-Հայաստան» Ծրագրի Մրցույթների վիճարկման համակարգի 2-րդ և 6-րդ հոդվածների համաձայն ստեղծված Մրցույթների վիճարկման հանձնաժողովի հետևյալ կազմը.

Տիգրան Բարսեղյան –	ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Աշոտ Վարդանյան -	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ձեռքբերումների վարչության պետ
Սերգեյ Թանքուշյան-	Համաշխարհային բանկի կրթության որակի և համապատասխանության ծրագրի գնումների մասնագետ
Սերգեյ Վարդանյան -	ԱՄՆ ՄԶԳ զարգացման ծրագրերի ֆինանսական ոլորտի իրավաբան-խորհրդատու
Դավիթ Աթանեսյան -	Հայաստանի ամերիկյան առևտրի պալատի նախագահ
Մարինե Ղազարյան -	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական գծով տնօրեն

Տիգրան Զրբաշյան - Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի հայաստանյան տնօրեն

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1 /մեկ/ ներկայացուցիչ

ՀՄՀ Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի 1 /մեկ/ ներկայացուցիչ:

Օրակարգի նախապես ներկայացված հարցերի սպառումից հետո «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը տեղեկացրեց, որ նիստի օրակարգի «Այլ հարցեր»-ի շարքում ԿԽ անդամ Վարդան Համբարձումյանի կողմից գրավոր ներկայացված է դիմում-տեղեկատվություն */կցվում է 2 լեզվով/*՝ ուղղված ՀՀ Վարչապետ/«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ պարոն Ս. Սարգսյանին և Կառավարման Խորհրդի անդամներին /հայերեն/, ինչպես նաև նիստին մասնակցող՝ Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն, Կառավարման Խորհրդի դիտորդ պարոն Ալեքս Ռասինին /անգլերեն/:
Դիմում-տեղեկատվությունը վերաբերվում էր՝ 2007թ. սեպտեմբերի 4-ին կայացած Շահառուների խորհրդի ընտրության կարգի նախագծի քննարկման և հաստատման նպատակով հրավիրված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ընդհանուր ժողովին, և դրանով իսկ խնդրվում էր Կառավարման խորհրդի միջամտությունը՝ ՀՄՀ-Հայաստան Ծրագրի Շահառուների Խորհրդի ընտրությանը սպառողական կոոպերատիվների մասնակցությունն ապահովելու հարցում:

Բարձրացված խնդրի կապակցությամբ Կառավարման Խորհուրդը որևէ որոշում չընդունեց, քանի որ ՀՄՀ-Հայաստան Ծրագրի Շահառուների Խորհրդի ընտրության հարցերին Կառավարման Խորհրդի անդրադառնալը կարող է դիտարկվել որպես ՀՀ կառավարության միջամտություն քաղաքացիական հասարակայնության կողմից ստեղծվող անկախ մարմնի գործերին:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու
Ռ. Ղազարյանը